ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 527-Ա/2 «14» մայիսի 2019 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳՐԱԽՈՍՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N703-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 02.04.2019թ N289-Ա/2 հրամանով ձևավորված աշխատանքային խմբի N 5 արձանագրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության իրականացման համար ընդունելի գրախոսվող գիտական պարբերականների՝

1) ցանկի ձևավորման կանոնները՝ համաձայն Հավելված N 1-ի,

2) փորձագիտական գնահատման չափանիշները՝ համաձայն Հավելված N 2-ի,

3) ցանկում պարբերականի ընդգրկման նպատակով ներկայացվող ամփոփ տեղեկատվության ցանկը՝ համաձայն Հավելված N 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին՝

1) մինչև ս.թ. մայիսի 23-ը ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը ներկայացնել գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության իրականացման համար ընդունելի գրախոսվող գիտական պարբերականների ցանկի ձևավորման հանձնաժողովի կազմը,

2) մինչև ս.թ. նոյեմբերի 30-ը ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը ներկայացնել գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության իրականացման համար ընդունելի գրախոսվող գիտական պարբերականների ցանկը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X _____

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2019թ. մայիսի 14-ի N 527-Ա/2 հրամանի

ԿԱՆՈՆՆԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳՐԱԽՈՍՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Սույնով սահմանվում են գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից ընդունելի գրախոսվող գիտական պարբերականների (այսուհետ՝ Պարբերական) ցանկի (այսուհետ՝ Ցանկ) ձևավորման կանոնները:

2. Ցանկը ձևավորում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ Կոմիտեի եզրակացության հիման վրա:

3. Ցանկի ձևավորման վերաբերյալ Կոմիտեին առաջարկություն պատրաստելու և ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (այսուհետ՝ Նախարար) ստեղծում է Ցանկի ձևավորման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Կոմիտեի, Նախարարության բարձրագույն որակավորման կոմիտեի, Նախարարության լեզվի կոմիտեի, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

5. Հանձնաժողովի անհատական կազմը, թվաքանակը և աշխատակարգը հաստատվում են Նախարարի կողմից: Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի եզրակացություն պահանջող նյութի բացակայության պարագայում Հանձնաժողովի հերթական նիստը կարող է տեղի չունենալ՝ Հանձնաժողովի անդամներին նախապես էլեկտրոնային փոստով տեղեկացնելու պայմանով: Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքներն իրականացնում է Կոմիտեն:

6. Ցանկում ընդգրկվելու համար Պարբերականը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պայմաններին՝

1) լրիվ և կրճատ անվանումների համընկնումների բացառումը որևէ հայտնի գիտական պարբերականի անվանման հետ՝ բնագրի լեզվով կամ հաստատված թարգմանություններով,

2) գիտական նյութի առնվազն 75% չափաբաժնի առկայությունը,

3) պաշտոնական կայքէջի առկայությունը,

4) պարբերական միջազգային ստանդարտ համարի (ISSN) առկայությունը,

5) առնվազն երկու տարվա գործունեության և առնվազն երեք հաջորդական համարների առկայությունը,

6) համարներում նյութի միևնույն ծավալի՝ ողջամիտ շեղումների սահմաններում, պահպանումը,

7) հայտարարված ժամկետներում հրապարակվելը:

7. Ցանկի Պարբերականների գիտական բովանդակության, խմբագրակազմի մասնագիտական որակավորման, գրախոսման և հրապարակման գործընթացների գնահատման նպատակով Հանձնաժողովը կազմակերպում է մասնագիտական գնահատում՝ անկախ փորձագետների ներգրավմամբ: Գնահատումն իրականացվում է ըստ Հավելված N 2-ում բերված Պարբերականների փորձագիտական գնահատման չափանիշների (այսուհետ՝ Չափանիշներ): Ցանկում ընդգրկված Պարբերականները բաժանվում են չորս կարգի՝ ըստ փորձագիտական գնահատականների.

1) ***Ա*** կարգ՝ Պարբերականը հիմնականում համապատասխանում է Վեբ օֆ Սայնս (Web of Science) և/կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված գիտական պարբերականներին առաջադրվող պահանջներին, և տարբերություններն աննշան են.

2) ***Բ*** կարգ՝ Պարբերականը որոշակի վերապահումներով է համապատասխանում Վեբ օֆ Սայնս (Web of Science) և/կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված գիտական պարբերականներին առաջադրվող պահանջներին.

3) ***Գ*** կարգ՝ Պարբերականն ընդհանուր առմամբ համապատասխանում է Վեբ օֆ Սայնս (Web of Science) և/կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված գիտական պարբերականներին առաջադրվող պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք, սակայն, շտկելի են.

4) ***Դ*** կարգ՝ Պարբերականը մասնակիորեն է համապատասխանում Վեբ օֆ Սայնս (Web of Science) և/կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված

գիտական պարբերականներին առաջադրվող պահանջներին, սակայն ողջամիտ ժամկետում ունակ է շտկելու իրավիճակը:

8. Պարբերականների տարբեր կարգերին համապատասխանող փորձագիտական գնահատականների եզրային արժեքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից և հաստատվում Կոմիտեի նախագահի կողմից:

9. Վեբ օֆ Սայնս (Web of Science) և/կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված Պարբերականները համարվում են Ցանկում ընդգրկված՝ առանց լրացուցիչ պահանջների և Պարբերականների փորձագիտական գնահատականների առավելագույն հնարավոր արժեքին հավասար գնահատականով: Հատուկ գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն ընդգրկող կամ որոշակի առանձնահատկություններ ունեցող գիտական և գիտատեխնիկական գործունեության մասնագիտությունների Պարբերականները Ցանկում ընդգրկվում են հատուկ ընթացակարգով, որը մշակում է Հանձնաժողովը, և որը հաստատվում է Նախարարի հրամանով:

10. Ցանկում ընդգրկվելու համար Պարբերականը՝ գլխավոր խմբագրի դիմումով, Կոմիտե պետք է ներկայացնի Պարբերականի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն պարունակող հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ ըստ Հավելված N 3-ում բերված պահանջների:

11. Կոմիտեն 30 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Հայտի նախնական փորձաքննություն՝ սույն կանոնների 6-րդ կետում և Հավելված N 3-ում բերված պահանջներին համապատասխան ներկայացված տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության ստուգման նպատակով: Եթե Պարբերականի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության առնվազն մեկ քառորդը ոչ արժանահավատ է, ապա Հայտը մերժվում է, և Պարբերականը նոր Հայտ կարող է ներկայացնել ոչ շուտ, քան տվյալ Հայտի ներկայացման ժամկետից մեկ տարի հետո:

12. Ցանկում ընդգրկման Հայտ ներկայացրած և նախնական փորձաքննության փուլը հաղթահարած Պարբերականի Հայտը 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Հաձնաժողով: Հայտը ստանալուց հետո եռամսյա ժամկետում Հանձնաժողովը Կոմիտե է ներկայացնում Պարբերականը Ցանկում ընդգրկելու կամ Հայտը մերժելու վերաբերյալ առաջարկություն՝ կազմված Պարբերականի փորձագիտական գնահատականների հիման վրա:

13. Հանձնաժողովի առաջարկությունը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն Նախարարին է ներկայացնում Պարբերականը Ցանկում ընդգրկելու կամ Հայտը մերժելու վերաբերյալ եզրակացություն:

14. Ցանկը ձևավորվում և դրանում փոփոխություններ կատարվում են Նախարարի հրամանով: Ցանկում ընդգրկելու վերաբերյալ Պարբերականի Հայտի դրական եզրակացության առկայության դեպքում այն ընդգրկվում է Ցանկում հայտի ներկայացման տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից: Մերժված Հայտը կարող է լրամշակվել, և նոր Հայտ ներկայացվել Կոմիտե՝ տվյալ Հայտի մերժման ժամկետից ոչ վաղ, քան վեց ամիս հետո:

15. Ցանկում ընդգրկված Պարբերականների գործունեության մշտադիտարկումը կազմակերպում է Կոմիտեն՝ Հաձնաժողովի մշակված և Կոմիտեի նախագահի հաստատած Պարբերականների գործունեության մշտադիտարկման կարգին համապատասխան: Մշտադիտարկման պարբերականությունը որոշվում է Պարբերականի կարգով և սահմանվում է Հանձնաժողովի կողմից: Մշտադիտարկման նպատակը Պարբերականի կողմից իրականացվող գործառույթների գնահատումը և Պարբերականի ու ցանկում իր կարգի համապատասխանության ստուգումն է: Ընդ որում, մշտադիտարկման է ենթարկվում ***Ա, Բ*** և **Գ** կարգերի Պարբերականների գործունեությունը, իսկ **Դ** կարգի Պարբերականների համար սահմանվում է մեկ տարի փորձաշրջան՝ առնվազն **Գ** կարգի Պարբերականների պահանջներին բավարարելու համար: Կոմիտեին իրավունք է վերապահվում առանձին դեպքերում, հիմնավոր պահանջների առկայության պարագայում, կազմակերպել Պարբերականի գործունեության արտահերթ մշտադիտարկում:

16. Պարբերականը Ցանկից հանվում է, եթե՝

1) դադարեցվել է հրատարակությունը.

2) գլխավոր խմբագրի կողմից Կոմիտե է ներկայացվել դիմում.

3) գործունեության մշտադիտարկման արդյունքում կազմվել է համապատասխան եզրակացություն.

4) երեք հաջորդական համարներից յուրաքանչյուրում արձանագրվել են առանց հեղինակների և աղբյուրների նշման փոխառություններով առնվազն մեկական հրապարակված աշխատություններ:

17. Ցանկը տեղադրվում է Նախարարության և Կոմիտեի պաշտոնական կայքէջերում: Ցանկում ներկայացվում է Պարբերականների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1) լրիվ և կրճատ անվանումները,

2) բնագավառը և մասնագիտությունները, որոնք պետք է ընտրված լինեն Նախարարի կողմից սահմանված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների ցանկից,

3) կարգը և Ցանկում ընդգրկվելու ամսաթիվը, ամիսը և տարեթիվը (օօ.աա.տտտտ),

4) պարբերականի միջազգային ստանդարտ համարը (ISSN),

5) պաշտոնական կայքէջը:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2019թ. մայիսի 14-ի N 527-Ա/2 հրամանի

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳՐԱԽՈՍՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության իրականացման համար ընդունելի գրախոսվող գիտական պարբերականների (այսուհետ՝ Պարբերական) փորձագիտական գնահատումն իրականացվում է ըստ Պարբերականների փորձագիտական գնահատման հետևյալ չափանիշների (այսուհետ՝ Չափանիշ)՝

1) գիտական բովանդակության,

2) խմբագրական խորհրդի մասնագիտական որակավորման,

3) գրախոսման գործընթացի,

4) հրապարակման գործընթացի:

2. Յուրաքանչյուր Չափանիշի գնահատականը դրա ենթաչափանիշների կշռային գնահատականների գումարն է: Ենթաչափանիշի կշռային գնահատականը գնահատականի և կշռի արտադրյալն է: Յուրաքանչյուր ենթաչափանիշի գնահատականը տրվում է միավորներով՝ 0-ից մինչև 5 միջակայքից, 0.5 ճշտությամբ: Նվազագույն գնահատականը 0-ն է, իսկ, առավելագույնը՝ 5-ը:

3. Չափանիշների գնահատականը որոշվում է ըստ հետևյալ ենթաչափանիշների՝

1) Գիտական բովանդակությունը գնահատվում է ըստ Աղյուսակ 1-ում ներկայացված ենթաչափանիշների, դրանց գնահատականների և կշիռների՝

Աղյուսակ 1: Գիտական բովանդակության գնահատման ենթաչափանիշները					
Հ/հ	**Ենթաչափանիշ**	**Նկարագրություն**	**Գնահատական**	**Կշիռ**	**Կշռային գնահատական**
1	**Արդիականություն**	Որքանով են հոդվածներն արդիական և չեն կրում «արխիվային» կամ «վիճակագրական» բնույթ:		1.5	

2	**Հեռանկարայնություն**	Որքանով են հոդվածները համարվում նոր ներդրում Պարբերականի ընդգրկման բնագավառում կամ մասնագիտություններում և որքանով են միտված նոր ուղղությունների, քննարկումների կամ հեռանկարների բացահայտմանը:		1.5	
3	**Համապատասխանություն**	Որքանով են հրապարակված նյութերը համապատասխանում Պարբերականի գիտական նպատակներին և խնդիրներին:		1	
4	**Որոշակիություն**	Որքանով են հոդվածներն ուղղված որոշակի գիտահետազոտական խնդիրների լուծմանը:		1	
5	**Ամբողջականություն**	Որքանով են հոդվածներն ամբողջական և որքանով են պարունակում բոլոր անհրաժեշտ բաղադրիչները:		1	
6	**Առանց հեղինակների նշման փոխառությունների բացառում**	Որքանով արդյունավետ են ներդրված առանց հեղինակների և աղբյուրների նշման փոխառությունների բացառման մեխանիզմները:		1	
7	**Ոլորտային համապատասխանություն**	Որքանով են հոդվածները կազմված Պարբերականի ընդգրկման բնագավառում կամ մասնագիտություններում ընդունված նորմերին համապատասխան (ներածություն, հետազոտության մեթոդներ, արդյունքներ, քննարկում, եզրակացություններ և այլն):		0.5	
8	**Շարադրանք**	Որքանով են հոդվածները և ամփոփագրերը համարժեքորեն և ընդգրկուն շարադրված բնագրի լեզվից տարբեր լեզվով /լեզուներով:		0.5	
Ընդամենը 1-8 ենթաչափանիշներ (առավելագույնը՝ 40 միավոր):					

2) Խմբագրական խորհրդի մասնագիտական որակավորումը գնահատվում է ըստ Աղյուսակ 2-ում ներկայացված ենթաչափանիշների, դրանց գնահատականների և կշիռների՝

Աղյուսակ 2: Խմբագրական խորհրդի մասնագիտական որակավորման գնահատման ենթաչափանիշները					
Հ/հ	**Ենթաչափանիշ**	**Նկարագրություն**	**Գնահատական**	**Կշիռ**	**Կշռային գնահատական**
1	**Խմբագրական խորհրդի համապատասխանություն**	Որքանով են խմբագրական խորհրդի անդամների մասնագիտությունները համապատասխանում Պարբերականի ընդգրկման բնագավառին կամ մասնագիտություններին:		1	
2	**Պարտականությունների սահմանում**	Որքանով են սահմանված խմբագրական խորհրդի յուրաքանչյուր անդամի համար պարտականությունները և որքանով են դրանք արտացոլված Պարբերականի կայքէջում:		1	

3	**Գլխավոր խմբագրի հրապարակման ակտիվություն**	Որքանով են գլխավոր խմբագրի վերջին 5 տարիների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքները ներկայացված գիտական գրականության մեջ:		1	
4	**Խմբագրական խորհրդի հրապարակման ակտիվություն**	Որքանով են խմբագրական խորհրդի անդամների, բացի գլխավոր խմբագրից, վերջին 5 տարիների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքները ներկայացված գիտական գրականության մեջ:		1	
5	**Ընդգրկվածություն**	Որքանով են խմբագրական խորհրդում ընդգրկված,Պարբերականի հիմնադիր կազմակերպությունից բացի,այլ կազմակերպությունների և/կամ արտասահմանյան մասնագետներ:		1	
6	**Հիմնադրի համապատասխանություն**	Որքանով է հիմնադրի գործունեության բնագավառը համապատասխանում Պարբերականի ընդգրկման բնագավառին կամ մասնագիտություններին:		1	
Ընդամենը 1-6 ենթաչափանիշներ (առավելագույնը՝ 30 միավոր)					

3) Գրախոսման գործընթացը գնահատվում է ըստ Աղյուսակ 3-ում ներկայացված ենթաչափանիշների, դրանց գնահատականների և կշիռների՝

Աղյուսակ 3: Գրախոսման գործընթացի գնահատման ենթաչափանիշները					
Հ/հ	**Ենթաչափանիշ**	**Նկարագրություն**	**Գնահատական**	**Կշիռ**	**Կշռային գնահատական**
1	**Նկարագրություն**	Որքանով մանրակրկիտ է իրականացվում գրախոսությունը և որքանով է արտացոլված գրախոսական եզրակացության մեջ:		1	
2	**Ընդգրկվածություն**	Որքանով են գրախոսություն իրականացնելու մեջ ընդգրկված, Պարբերականի հիմնադիր կազմակերպությունից բացի, այլ կազմակերպությունների և/կամ արտասահմանյան մասնագետներ:		1	
3	**Գրախոսների հրապարակման ակտիվություն**	Որքանով են արտացոլված գիտական գրականության մեջ գրախոսների վերջին 5 տարիների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքները:		1	
4	**Գրախոսությունների արխիվացում**	Որքանով են հիմնավորված գրախոսությունների պահպանման եղանակները և ժամկետները:		0.5	
5	**Շահերի բախման բացառում**	Որքանով արդյունավետ են ներդրված շահերի բախման բացառման և գրախոսների անանունության ապահովման (անհրաժեշտության դեպքում) մեխանիզմները:		0.5	
Ընդամենը 1-5 ենթաչափանիշներ (առավելագույնը՝ 20 միավոր):					

4) Հրապարակման գործընթացը գնահատվում է ըստ Աղյուսակ 4-ում ներկայացված ենթաչափանիշների, դրանց գնահատականների և կշիռների՝

Աղյուսակ 4: Հրապարակման գործընթացի գնահատման ենթաչափանիշները					
Հ/հ	**Ենթաչափանիշ**	**Նկարագրություն**	**Գնահատական**	**Կշիռ**	**Կշռային գնահատական**
1	**Ընթացակարգի կազմակերպում**	Որքանով են հոդվածի ընդունման, քննարկման և հրապարակման ընթացակարգերը համապատասխանում ժամանակակից նորմերին՝ ըստ Պարբերականի ընդգրկման բնագավառի կամ մասնագիտությունների:		0.5	
2	**Էթիկայի նորմերի պահպանում**	Որքանով են պահպանվում հրապարակման ընթացակարգի էթիկայի նորմերը:		0.5	
3	**Տվյալների արխիվացում**	Որքանով է ամբողջական և ողջամիտ ժամկետով իրականացվում տվյալների արխիվացումը:		0.5	
4	**Կայքէջի բովանդակություն**	Որքանով ամբողջական է կայքէջը նկարագրում Պարբերականը և հրապարակման գործընթացը, և որքանով ամբողջական է անգլերեն տարբերակը:		0.5	
Ընդամենը 1-4 ենթաչափանիշներ (առավելագույնը՝ 10 միավոր):					

4. Պարբերականի փորձագիտական գնահատականը սույն Չափանիշների 3-րդ կետի 1-ից 4-րդ ենթակետերով որոշվող ենթաչափանիշների կշռված գնահատականների գումարն է:

5. Պարբերականի փորձագիտական գնահատումն իրականացնում է երեք անդամներից կազմված փորձագիտական գնահատման խումբը: Խմբի անդամներից մեկը ներկայացնում է Հանձնաժողովը, իսկ երկուսը Պարբերականի գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի/մասնագիտության ներկայացուցիչներ/փորձագետներ են, որոնք ներգրավված չեն Պարբերականի խմբագրական խորհրդի կազմի մեջ:

6. Պարբերականի փորձագիտական գնահատման խմբի կազմը հաստատվում է Կոմիտեի նախագահի հրամանով՝ Հանձնաժողովի առաջարկության հիման վրա:

7. Պարբերականի փորձագիտական գնահատման ժամանակ յուրաքանչյուր Չափորոշիչի գնահատականը երեք փորձագետներից երկուսի գնահատականների միջին թվաբանականն է՝ բացառելով առավելագույն տարբերությամբ գնահատականը:

Հավելված N 3

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2019թ. մայիսի 14-ի N 527-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳՐԱԽՈՍՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

1. Պարբերականի գլխավոր խմբագրի դիմումը:
2. Պարբերականի՝
   1) լրիվ և կրճատ անվանումները՝ հայերեն և անգլերեն,
   2) հիմնադրման ամսաթիվը, ամիսը և տարեթիվը (օօ.աա.տտտտ),
   3) խմբագրության՝
      ա. հասցեն,
      բ. հեռախոսահամարը,
      գ. էլեկտրոնային փոստի հասցեն
      դ. պաշտոնական կայքէջը,
   4) ISSN համարը,
   5) Հրապարակման պարբերականությունը (համար/տարի),
   6) վերջին 3 համարների էլեկտրոնային ֆայլերը կամ ամբողջական տեքստերով համարների հղումները,
   7) վերջին 3 համարում հրապարակված հոդվածների գրախոսությունների փաթեթը՝ պահպանելով գրախոսների անանունությունը:
3. Պարբերականի խմբագրական խորհրդի անդամների՝
   1) ազգանուն, անուն, հայրանունը,
   2) գիտական աստիճանը, կոչումը,
   3) հիմնական աշխատանքի վայրը,
   4) պաշտոնը,
   5) հեռախոսահամարը,
   6) էլեկտրոնային փոստի հասցեն,
   7) վերջին 5 տարիների հրապարակումների ցանկը:
4. Պարբերականի հիմնադրի՝

1) անվանումը,
2) հասցեն,
3) հեռախոսահամարը,
4) էլեկտրոնային փոստի հասցեն,
5) կազմակերպաիրավական ձևը:

5. Պարբերականի փորձագիտական գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություն:
6. Հանձնաժողովի կողմից պահանջվող լրացուցիչ փաստաթղթեր:
7. Ներկայացված տեղեկատվության հավաստիությունը հաստատող տեղեկանքը Պարբերականի հիմնադիր կազմակերպությունից: